

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱՂՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՏԱԽԱՂՈՒԹՅՈՒՆ**

0901, ք. Արմավիր, Շահումյան 48, ☎ (010) 311-279, 311-280, 311-281 📠 (0237) 21-999

08.08.2024/բ.

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒՆ

(Հասցե՝ Արմավիրի մարզ, Մեծամոր քաղաք, Վարչական կենտրոն, 2.1)

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՑ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝
«Դատախազի կողմից պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց
հարուցելն ընդգրկում է՝

(...)

2) վարչական դատավարության կարգով պետության (համայնքի) գույքային և
ոչ գույքային շահերի պաշտպանության հայցի հարուցումը. (...):»:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

«Դատախազը պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց
հարուցում է հետևյալ բացառիկ դեպքերում, երբ՝

1) իր լիազորություններն իրականացնելիս հայտնաբերում է, որ պետական կամ
տեղական ինքնակառավարման մարմինը, որին վերապահված է պետական
(համայնքային) շահերի պաշտպանությանն առնչվող փյալ հարցերով հայց
ներկայացնելը, իրազեկ լինելով պետական (համայնքային) շահերի խախտման
փաստի մասին, դատախազի կողմից հայց ներկայացնելու առաջարկություն
ստանալուց հետո ողջամիտ ժամկետում հայց չի ներկայացրել:»

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին
մասի համաձայն՝

«Համայնքի ավագանին սույն օրենքով սահմանված կարգով

(...)

10) դատական կարգով կարող է վիճարկել Հայաստանի Հանրապետության
Սահմանադրությանը, օրենքներին և համայնքի ավագանու որոշումներին հակասող՝
համայնքի ղեկավարի որոշումները.»:»

ՀՀ Վճռաբեկ դատարանն իր 2024 թվականի մայիսի 10-ի թիվ ՎԴ2/0250/05/23 որոշմամբ անդրադառնալով համայնքային շահերի հայց հարուցելու լիազորության իրականացմանը՝ նշել է հետևյալը.

«(...) երբ դատախազը իր լիազորություններն իրականացնելիս հայտնաբերել է համայնքի ղեկավարի կողմից համայնքային շահերի խախտման փաստ, պարտավոր է հայց ներկայացնելու առաջարկությամբ դիմել համայնքի ավագանուն, քանի որ վերջինիս է վերապահված համայնքային շահերի պաշտպանությանն առնչվող փվյալ հարցերով **հայց ներկայացնելու առաջնային իրավասությունը**: Եթե դատախազի կողմից հայց ներկայացնելու առաջարկություն ստանալուց հետո համայնքի ավագանին ողջամիտ ժամկետում հայց չի ներկայացրել դատարան, ապա միայն այդ պայմաններում է դատախազությունը ձեռք բերում համայնքային շահերի պաշտպանության հայց ներկայացնելու իրավունք:»:

ՀՀ Վճռաբեկ դատարանն իր նույն որոշմամբ, անդրադառնալով որևէ այլ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից դատախազության առաջարկի հիման վրա վարչական դատավարության կարգով պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելու ժամկետներին, նշել է.

«(...) մի շարք դեպքերում օրենսդիրը պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելու առաջնային լիազորությունը վերապահել է այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնին, որի իրավասությունների ոլորտում պետությանը (համայնքին) պատճառվել է գույքային վնաս:

Ուստի այն դեպքում, երբ պետական (համայնքային) շահերի պաշտպանությանն առնչվող փվյալ հարցով հայց ներկայացնելը վերապահված է որևէ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի, դատախազը, **նախ պետք է պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց ներկայացնելու առաջարկություն կարարի համապատասխան պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնին:**

(...) Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատախազի ներկայացրած առաջարկությունը ստանալուց հետո պետական շահերի պաշտպանությանն առնչվող համապատասխան հայցով դատարան դիմելու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի իրավասությունը սահմանափակված է **ողջամիտ ժամկետով, որը փվյալ պարագայում Վճռաբեկ դատարանի գնահատմամբ պետք է հաշվարկվի համապատասխան հայցատեսակի դեպքում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված ժամկետներով:**

Ընդ որում, փվյալ ժամկետի հաշվարկման ելակետը պետք է պայմանավորել **դատախազի կողմից ներկայացված առաջարկությունը ստանալու պահով:**

Այլ կերպ ասած՝ եթե պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը ստացել է դատախազի առաջարկությունը՝ պետական շահերի պաշտպանությանն առնչվող հարցով դատարան դիմելու վերաբերյալ, ապա փվյալ մարմինը առաջարկությունը ստանալուց հետո ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով հայց ներկայացնելու ժամկետների պահպանմամբ պետք է դիմի ՀՀ վարչական

դատարան, որպիսի ժամկետներում ներկայացված հայցը կհամարվի որջամիտ ժամկետում ներկայացված:

Այսինքն՝ համայնքի ղեկավարի վարչական ակտի, գործողության կամ անգործության կապակցությամբ դատախազը իրավասու է համայնքային շահերի պաշտպանության հայց հարուցել միայն այն պայմաններում, երբ վերջինս հայց ներկայացնելու առաջարկություն է ներկայացրել համայնքի ավագանուն, իսկ **համայնքի ավագանին որջամիտ ժամկետում հայց չի ներկայացրել**, այլ կերպ ասած՝ դրսևորել է անգործություն, որպիսի պայմաններում կարելի է փաստել օրենքով նախատեսված բացառիկ դեպքի և ըստ այդմ՝ պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց ներկայացնելու լիազորությունը իրացնելու համար անհրաժեշտ նախապայմանների առկայության մասին»:

Պետության գույքային շահերի արդյունավետ պաշտպանությունն ապահովելու և պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորությունների շրջանակում իրականացված ուսումնասիրության ընթացքում պարզվել է, որ՝

Ալբերտ Աղասու Խաչատրյանը, 2003 թվականից մինչև 2013 թվականը հանդիսանալով պաշտոնատար անձ, այն է՝ զբաղեցնելով Տարոնիկ համայնքի ղեկավարի պաշտոնը, իր պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելով, շահադիտական դրդումներով՝ նպատակ ունենալով Տարոնիկ գյուղի Զորավար Անդրանիկի թիվ 6 հասցեում գտնվող հողամասի և մանկապարտեզի շենքի մի մասը հետագայում ներառել իր գույքային ֆոնդում, փաստացի Տարոնիկ համայնքին սեփականության իրավունքով պատկանող, Արմավիրի մարզի Տարոնիկ գյուղի Զորավար Անդրանիկի թիվ 6 հասցեում գտնվող մանկապարտեզի շենքի զբաղեցրած 620 քմ հողամասի նկատմամբ ապօրինի, այն է՝ ՀՀ հողային օրենսգրքի 118-րդ հոդվածի 6-րդ մասի և 64-րդ հոդվածների վկայակոչմամբ, այն պայմաններում երբ ՀՀ հողային օրենսգրքի 118-րդ հոդվածը կիրառելի է միայն իրավաբանական անձանց նկատմամբ, իսկ 64-րդ հոդվածով պարտադիր պահանջ է սահմանում վարձակալության իրավունքը գրանցած լինելու վերաբերյալ, վերականգնել է Սահակ Հարությունյանի նախկինում ունեցած վարձակալության իրավունքը հիշյալ հասցեի հողամասի նկատմամբ, ինչն էլ հետագայում հիմք է հանդիսացել գրանցելու այդ հողամասի և դրա վրա գտնվող անշարժ գույքի նկատմամբ Սահակ Հարությունյանի սեփականության իրավունքը, որը այն հետագայում վաճառել է Ալբերտ Խաչատրյանին, այդպիսով չարաշահել է իր պաշտոնեական լիազորությունները, որի արդյունքում էական վնաս է պատճառվել պետության օրինական շահերին:

Ուսումնասիրությամբ պարզվել է նաև, որ առկա է միաժամանակ 2 որոշում, մասնավորապես Տարոնիկ համայնքի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 1992 թվականի մարտի 12-ի թիվ 3 որոշում, որով մանկապարտեզի շենքը սեփականաշնորհել, վաճառվել է Սահակ Հարությունյանին, իսկ 620 քմ մանկապարտեզի զբաղեցրած հողամասը հատկացվել է վարձակալության իրավունքով անժամկետ օգտագործման և Էջմիածնի շրջանի Տարոնիկ գյուղխորհրդի գործկոմի 1993 թվականի հունիսի 15-ին կայացած նիստի ՆՈ

11 արձանագրություն 2-րդ կետից քաղված, որով ժող. սպասարկման ապրանքների արտադրության նպատակով օրեկտ կազմակերպելու համար թույլատրվել է սեփականաշնորհման կարգով գյուղի նախկին մսուր-մանկապարտեզի շենքը վաճառել Սահակ Երվանդի Հարությունյանին տվյալ ժամանակի գործող գներով:

Հիշյալ փաստաթղթերում նշում չկա թե ինչ իրավակարգավորումներով են առաջնորդվել այս որոշումները կայացնելիս: «Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ հողամասերի հատկացման վերաբերյալ հարցերի լուծման համար կազմվում են հողային բարեփոխումների և սեփականաշնորհման կենտրոնական, ճյուղային, շրջանային և տեղական հանձնաժողովներ: Հողային բարեփոխումների և սեփականաշնորհման կենտրոնական հանձնաժողովը կազմվում է Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհրդի կողմից: Մյուս հանձնաժողովները կազմվում են Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհրդի կողմից սահմանվող կարգով: Հողային բարեփոխումների և սեփականաշնորհման կենտրոնական հանձնաժողովի որոշումը վերջնական է և կարող է փոփոխվել կամ վերացվել միայն դատական կարգով: «Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին» հայաստանի հանրապետության օրենքը կիրարկելու մասին ՀՀ օրենքի համաձայն՝ այն բնակավայրերում, որտեղ պատգամավորների համապատասխան խորհուրդները բացակայում են, հողամասերի հատկացման ձևի ընտրության և հողահատկացման ֆունկցիաներն իրականացնում են հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովները, որոնք կազմվում են ընտրված պատգամավորների համապատասխան շրջանային խորհուրդները: Հողային բարեփոխումների և սեփականաշնորհման գործընթացի համար սահմանել երկամյա ժամկետ, սկսած 1991 թ. փետրվարի 20-ից: Սահմանել, որ հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովներն իրենց գործունեությունը դադարեցնում են այդ ժամկետը լրանալու պահից և իրավասությունն անցնում է պատգամավորների համապատասխան տեղական խորհուրդներին: Կարծում եմ հիշյալ կարգավորումներից բխում է, որ Տարոնիկ համայնքի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովը չէր կարող անշարժ գույքի վաճառելու վերաբերյալ որոշում կայացնել, քանի որ օրենսդրությամբ նման լիազորություն սահմանված չի եղել և կարող էր միայն հողամասի հատկացման վերաբերյալ որոշում կայացնել: Այսպիսով հիմնավորվում է, որ Սահակ Հարությունյանի հիշյալ անշարժ գույքի և հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման հիմքում դրված փաստաթղթերը կայացվել են այդ լիազորությունը չունեցող մարմնի կողմից, հետևաբար Սահակ Հարությունյանի սեփականության իրավունքը գրանցումը ենթակա է անվավեր ճանաչվելու:

Կադաստրային գործում առկա է ՀՀ Արմավիրի մարզի Տարոնիկի գյուղական համայնքի ղեկավարի 2010 թվականի նոյեմբերի 10-ի որոշումը, համաձայն որի՝ վերականգնվել Սահակ Հարությունյանի նախկինում ունեցած վարձակալության իրավունքը իր մանկապարտեզի շենքի զբաղեցրած 620 քմ հողամասի նկատմամբ և չի առարկվել նրա սեփականության իրավունքը այդ հողամասի նկատմամբ ճանաչելու

դեմ: Հիշյալ որոշումը կայացնելիս Տարոնիկ համայնքի ղեկավարը առաջնորդվել է ՀՀ հողային օրենսգրքի 118-րդ հոդվածի 6-րդ կետով: Մասնավորապես, այդ հոդվածը սահմանում է, որ նախկինում իրավաբանական անձանց հատկացված հողամասերի հողհատկացման փաստաթղթերը պահպանված չլինելու դեպքում հողի մշտական օգտագործման իրավունք ունեցող անձինք դիմում են սույն օրենսգրքով սահմանված՝ հողամաս տրամադրող մարմիններին՝ ըստ հողամասի գտնվելու վայրի հողհատկացման փաստաթղթերի վերականգնման նպատակով: Վերջիններս մեկամսյա ժամկետում քննարկում և որոշում են կայացնում հողհատկացման հիմքերի վերականգնման վերաբերյալ՝ սույն օրենսգրքին համապատասխան՝ նրանց տրամադրելով վարձակալության իրավունք: Հիշյալ հոդվածից ակնհայտորեն բխում է, որ այն չէր կարող կիրառվել քննարկման առարկա հասարակական հարաբերության նկատմամբ: Այսպես. Սահակ Հարությունյանը հանդիսանում է ֆիզիկական անձ, իսկ այս իրավակարգավորումը կիրառելի է միայն իրավաբանական անձանց նկատմամբ, հետևաբար որոշում կայացնելիս համայնքի ղեկավարը չէր կարող առաջնորդվել սույն հոդվածով և իրավունքի վերականգնումը չէր կարող կատարվել համապատասխան իրավակարգավորման բացակայության պայմաններում: Իսկ որպես ֆիզիկական անձ հիշյալ գույքի նկատմամբ իրավունքներ ձեռք բերելը հավաստվում է Տարոնիկ համայնքի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 1992 թվականի մարտի 12-ի թիվ 3 որոշումով, համաձայն որի՝ մանկապարտեզի զբաղեցրած 620 քմ հողամասը հատկացվել է Սահակ Հարությունյանին վարձակալության իրավունքով անժամկետ օգտագործման, որը արդեն քննարկվեց վերևում:

Համաձայն՝ ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ մասի՝ մինչև 2005 թվականի նոյեմբերի 26-ը պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի (ներառյալ՝ սույն օրենսգրքի 118-րդ հոդվածի 4-րդ կետի հիմքով ձեռք բերված հողամասերը, բացառությամբ սույն օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի) նկատմամբ օրենսդրությամբ սահմանված կարգով անհատույց (մշտական) օգտագործման կամ վարձակալության իրավունք ձեռք բերած և այդ իրավունքները գրանցած իրավաբանական և ֆիզիկական անձանց սույն օրենքի ուժով սեփականության իրավունքով փոխանցվում են՝

1) տնամերձ, այգեգործական, ինչպես նաև անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար տրամադրված հողամասերը

2) հասարակական և արտադրական օբյեկտների կառուցման և սպասարկման համար տրամադրված հողամասերը, եթե դրանց վրա սահմանված կարգով կառուցվել են շենքեր և շինություններ, այդ թվում՝ կիսակառույց շենքեր, շինություններ՝ անկախ դրանց ավարտվածության աստիճանից:

Հիշյալ իրավակարգավորումից բխում է, որ սեփականության իրավունքը այդ հողամասի կարող էր փոխանցվել Ս.Հարությունյանին միայն այն դեպքում, երբ վերջինիս կողմից գրանցված լիներ այդ հողամասի նկատմամբ իր վարձակալության իրավունքը, սակայն դա չի կատարվել, հետևաբար այդ հողամասի նկատմամբ վերջինիս սեփականության իրավունքի գրանցումը կատարվել օրենքի խախտմամբ:

1991 թվականի հունվարի 29-ին ընդունված ՀՀ հողային օրենսգրքի 19-րդ հոդվածի համաձայն՝ հողի վարձակալության և այլ ժամանակավոր օգտագործման իրավունքը սահմանվում է պայմանագրով: Պայմանագրի ձևը և գրանցման կարգը որոշում է ՀՀ նախարարների խորհուրդը: Պայմանագրին կցվում է վարձակալության և այլ ժամանակավոր օգտագործման համար հատկացված հողերի հատակագիծը: Իսկ նույն օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝ հողի սեփականության և մշտական օգտագործման իրավունքը հաստատվում է համապատասխան պետական ակտով, որը տրվում է պատգամավորների համապատասխան տեղական խորհրդի գործադիր կոմիտեի կողմից: Հողի մշտական օգտագործման իրավունքի պետական ակտում նշվում են հողօգտագործողը, հողամասի չափերն ու սահմանները, նրա կադաստրային գնահատականը և հողամասը ըստ հատկացման նպատակային նշանակության օգտագործելու պայմանները: Քննարկվող դեպքում ակնհայտ է, որ բացակայում է որևէ պետական ակտ կամ պայմանագիր, որով կհաստատվի հիշյալ հողամասի նկատմամբ Ս.Հարությունյանի իրավունքները: Հետևաբար, թեև առկա են որոշումներ, որով մանկապարտեզի շենքը և վերջինիս ամրակցված հողամասը փոխանցվել են Ս.Հարությունյանին, սակայն գործնականում չեն իրականացվել օրենքով նախատեսված բոլոր վավերապայմանները այդ որոշումներին օրինական ուժ տալու համար: Ուստի թե իրավունքի վերականգնումը և թե Ս.Հարությունյանին հիշյալ տարածքների նկատմամբ իրավունքի փոխանցումը տեղի է ունեցել օրենքի խախտմամբ, հետևաբար առկա են հիշյալ իրավական ակտերի, Ս.Հարությունյանին տրված սեփականության վկայականի և կատարված գործարքների անվավերության հիմքեր:

Այնուհետև Սահակ Հարությունյանի կողմից օտարվել է հողամասը Հարություն Եզիազարյանին և Ալբերտ Խաչատրյանին: ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված հողամասերը սեփականության իրավունքով անհատույց ձեռք բերելուց հետո հողամասի առուվաճառքի, նվիրատվության, փոխանակման կամ իրավաբանական անձանց լուծարումից հետո նրա հիմնադիրներին (մասնակիցներին) հանձնման, այդ թվում՝ պարտատերերի պահանջների բավարարման կամ բռնագանձման հետևանքով հողամասի սեփականատիրոջ փոփոխության դեպքում անկախ այն հանգամանքից, թե հողամասը ձեռք է բերվում հատուցմամբ կամ անհատույց, ձեռք բերողը համապատասխանաբար պետական կամ համայնքային բյուջե պետք է վճարի հողամասի տվյալ պահին գործող կադաստրային արժեքը:

Սույն կետով նախատեսված դեպքերում իրավունքների պետական գրանցումը մերժվում է, եթե ձեռք բերողը չի ներկայացնում հողամասի տվյալ պահին գործող կադաստրային արժեքի վճարման անդորրագիրը:

Հիշյալ իրավակարգավորումից ակնհայտորեն բխում է, որ մերժման էր ենթակա Հարություն Եզիազարյանի և Ալբերտ Խաչատրյանի իրավունքի պետական գրանցումը Զորավար Անդրանիկի փողոցի 6 հասցեում գտնվող հողամասի նկատմամբ, քանի որ չի կատարվել կադաստրային արժեքի վճարում:

Վերոգրյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի համադրված վերլուծությունից հետևում է, որ վերոհիշյալ որոշմամբ (գործողությամբ, անգործությամբ) խախտվել են պետության (համայնքի) շահերը, ուստի առաջարկում եմ **նույն առաջարկությունը ստանալու պահից մեկամսյա ժամկետում** հայց հարուցել իրավասու դատարան և հարուցված հայցի մասին նույն օրը հայտնել ՀՀ Արմավիրի մարզի դատախազություն, իսկ հայց չհարուցելու պարագայում նույն ժամկետում այդ մասին տեղեկացնել ՀՀ Արմավիրի մարզի դատախազությանը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ մեկամսյա ժամկետում հարուցված հայցի մասին տեղեկատվության բացակայության դեպքում դատախազությունը ձեռնամուխ կլինի «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի հիմքով հայց հարուցելու լիազորության իրացմանը:

Կից ուղարկվում են հայց ներկայացնելու համար անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները՝ «36»:

Հարգանքով՝

**Արմավիրի մարզի դատախազ,
արդարադատության առաջին
դասի խորհրդական**



Վ.Վ.Սարգսյան

28.12.11
 1077-9999
 2011

Հայաստանի Հանրապետության
 կառավարության առընթեր անշարժ
 գույքի կադաստրի պետական
 կոմիտեի աշխատակազմի
 տարածքային
 ստորաբաժնի նման ղեկավար

պրն. Գ. Սահակյան -ին
 բաղ. Ասիա Բեկալյան -ից
 անուն, ազանուն, հայրանուն, անվանում
Կարապետյան - Տարած
 1955 թ. հուն 1093/338

ԴԻՍՈՒՍ

Նկատվում են Կարապետ Կարապետյան Սարգիս Բեկալյան
 և Արթուր Բեկալյան Սարգիս Բեկալյան Կարապետյան
Սարգիս Բեկալյան

- Կից ներկայացնում են
- 1 Կարապետ Կարապետյան
 - 2 Արթուր Բեկալյան
 - 3 Սարգիս Բեկալյան Սարգիս Բեկալյան
 - 4 Սարգիս Բեկալյան Կարապետյան
 - 5 Սարգիս Բեկալյան Կարապետյան
 - 6 Սարգիս Բեկալյան Սարգիս Բեկալյան

Ցանկացել են զանգված վճարների գանելին. խնդրում են կատարել 4/10 ընթացքում

վճարումները կկատարվեն « » 201 թ.

ԱՆՆՆԱԳՐԻ ԿՈՒՆԿԱՆՆԵՐ AF0788394 պր 30.10.03թ 207/11

ԱՅ
 26 12 11
 12 11
 12 11


1 Կարապետյան
26 12 2011թ
 2 Արթուր Բեկալյան
1093/338



Երկր N 207 25/12/2011 թ. ՀՀ ԱՐՄԵԼԻԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍՆԱԳՆՅՈՒՄԻ 2 օր.

Պահույթի անվանում	Պահույթի համար	Պահույթի կոդ	Պահույթի քանակ	Երեկոյան
Պահույթի անվանում	90001	3220018	13,000.00 AMD	Պահույթի կատարման հարցով բանկային օրում առավելության
Պահույթի անվանում			100	
Պահույթի անվանում			13,100.00 AMD	

Պահույթի համար 06-2000



Ստ. 25/12/2011 18:02
Տպ. 26/12/2011 6:02





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՏԱՐՈՆԻԿԻ ԳՅՈՒՂԱԴԵՏԱՐԱՆ

Ավիրի մարզ
արմիկ
0231/6-71-51

Թիվ 392

« » 2010 թ.

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Տրվում է Արմավիրի մարզի Տարոնիկ համայնքի բնակիչ Սահակ Հարությունյանին, այն մասին, որ նա ամբողջությամբ մուծել է իր մանկապարտեզի շենքի արժեքը և այդ շենքը չի գտնվում գյուղապետարանի հաշվեկշռում:

Տրվում է սույնը ներկայացնելու ըստ պահանջի:

ՏԱՐՈՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

ԱՊՁԱՏԱՐ ՄԱՏՆԱԳԵՏ



/ Ա. ԽԱԶԱՏՐՅԱՆ /

/ Ա. ԾԱՂՈՅԱՆ /

Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

Էջմիածնի շրջանի Տարոնիկի գյուղատնտեսական կոոպերատիվի 1993 թվականի հունիսի 15-րդ կայացած նիստի նմ. 11 արձանագրության նո. 2-րդ կ


Ս Ե Ց Ի Ն .- Տարոնիկ գյուղի ջնակը՝ Սահակ Երվանդի Հարությունյանի դիմումը, գյուղի նախկին մուր-մանկապարտեզի շենքը ժող. սպա ման ապրանքների արտադրության նպատակով օքեկտ կազմակերպելու մասին Արտահայտությունները հավանություն տվեցին Ս. Հարությունյանի ներածի նույնությամբ: Հաշվի առնելով, որ նա սթրատեգիկորեն է գործող օքեկտ աշխատանքի ներգրավել գյուղի ազգաբնակչությանը և մրաժամանակ թույլատրելով թույլատրելի ժող. սպաման ապրանքների արտադրությանը:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն . Թ ու յլ ատրել գյուղի նախկին մուր-ման պարտեզի շենքը սեփականաշնորհման կարգով վաճառել Սահակ Երվանդի Հարությունյանին սվյալ ժամանակի գործող զնեքով, ժող. սպաման ապրանքների արտադրության նպատակով օքեկտ կազմակերպելու համար:

Որոշումն ընդունվեց միաձայն:

ՆԱԽԱՆԱՀՆԻՑՆԵՐ
ԿԱՐՏՈՒՂԱՐՆԵՐ
Չ. Ս. ԵՂՆԱԶԱՐՅԱՆ
Ի. ԵՎԱԻՅԱՆ

>



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱԿԻՐԻ ՄԱՐԶԻ

ՏԱՐՈՆԻԿԻ ԳՅՈՒՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎՈՐԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Թիվ ---

« 10 » 11 2010թ.

ՏԱՐՈՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՍԱՀԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՇԵՆՔԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ 620.0 ԲՄ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐ ԻՐԱՆԿՈՒՄՔԻ ՎԵՐԱԿԱՆԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Դեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 118-րդ հոդվածի 6-րդ կետով և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ այդ հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում:

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ

1. Վերականգնել Սահակ Հարությունյանի նախկինում ունեցած վարձակալության իրավունքը իր մանկապարտեզի շենքի զբաղեցրած 620.0 բմ հողամասի նկատմամբ և չեմ արժանացնում, որ այդ հողամասի նկատմամբ ճանաչվի նրա սեփականության իրավունքը ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի պահանջներին համաձայն:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են գրանցման ՀՀԿԱ ԱԳԿ ՊԿ Վաղարշապատի տարածքային ստորաբաժանումում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՏԱՐՈՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎՈՐ

/ Ա. ԽԱԶՍԻՅԱՆ /

« 10 » 11 2010թ.

Գ Տարոնիկ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՏԱՐՈՆԻԿ ԳՅՈՒՄԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

թիվ 14

«10» նոյեմբերի 2010թ.


Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տարոնիկ գյուղի գյուղապետի «10» նոյեմբերի 2010 թ. N 14 որոշումը հասցե-համարանիշ տրամադրելու մասին:

Լ ս ե ց ի – Տարոնիկ համայնքի բնակիչ Սահակ Հարությունյանին՝ պատկանող մանկապարտեզի շենքին հասցե-համարանիշ տրամադրելու մասին:

Ո Ր Ո Շ Ե Գ ի – Հարգել Տարոնիկ համայնքի բնակիչ Սահակ Հարությունյանի դիմումը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 29.12.2006թ. N 2387- Ն որոշումը Տարոնիկ համայնքի բնակիչ Սահակ Հարությունյանին պատկանող մանկապարտեզի շենքին տալ Զ. Անդրանիկի փողոց տուն 6 հասցե:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՏԱՐՈՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ



/ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ /

« 10 » նոյեմբերի 2010թ.

գ. Տարոնիկ

Ք Ա Գ Վ Ա Ճ Ք

ՌՍԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈԳԱՅԻՆ ԲԱՐԵՓՈՆՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 1992 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 12-Ի ԹԻՎ 3 ՈՐՈՇՈՒՄԻՑ

Նախագահությանը՝

Հ. Եղիազարյանի

Քարտուղարությանը՝

Ի. Ավագյանի

Օ Ր Ա Վ Ա Ր Գ ՈՒ Մ

ՅԻՆ - Գյուղի բնակիչ Սահակ Հարությունյանի պահանջը գյուղի հին մանկապարտեզի
ընդ իրեն սեփականաշնորհելու մասին:

/ Զեկ. Հ. Եղիազարյան /

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն

1. Նկատի ունենալով այն հանգամանքը, որ նախկին մանկապարտեզի շենքը չի
չպահպանվում և գտնվում է վատ վիճակում, ուստի այդ շենքը 430.0 քմ չափով
սեփականաշնորհել, վաճառել Սահակ Հարությունյանին:
2. Մանկապարտեզի շենքի զբաղեցրած 620.0 քմ հողամասը հատկացնել Սահակ
Հարությունյանին վարձակալության իրավունքով անժամկետ օգտագործման:

Իսկականի հետ ճիշտ է:

ՏԱՐՈՒՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ՝

/ Ա. ԽԱԶԱՏՐՅԱՆ /

ՆԱՅԱՍԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



Վ Կ Ա Յ Ա Կ Ա Ն

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
(ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ) ԻՐԱՎՈՒՆՔԻ
ԳՐԱՆՅՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՃԱՆԱԶՎՈՒՄ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՎՈՒՄ Է ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔԸ:
ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՈՔ ՈՒՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԺԱՌԱՆԳՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ:
ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԸ ԻՐ ՀԱՅԵՑՈՂՈՒԹՅԱՄԸ ՏԻՐԱՊԵՏՈՒՄ, ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ ԵՎ ՏՆՕՐԻՆՈՒՄ Է
ԻՐԵՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ: ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ շՊԵՏՔ Է ՎՆԱՍ
ՊԱՏՃԱՌԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻՆ, ԽԱՆՏԻ ԱՅԼ ԱՆՋԱՆՅ, ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՕՐԻՆԱԿԱՆ ՇԱՀԵՐԸ:
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԿԱՐՈՂ Է ԶՐԿԵԼ ՄԻԱՅՆ ԴԱՏԱՐԱՆԸ՝ ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ
ԴԵՊԵՐՈՒՄ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայականը հանդիսանում է միակ փաստաթուղթը, որը հաստատում է անշարժ գույքի նկատմամբ սեփականության (օգտագործման) իրավունքը եւ սեփականատիրոջն իրավունք է տալիս կատարել անշարժ գույքի հետ կապված Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված գործարքներ:

ԿԱՅԱԿԱՆ ՏՐՈՒՄ Է

Անճախանություն
(անվավականության կամ ծախսագրծման)

ԻՐԱՎՈՒՆԵՐՎ

Մանուկ Եղիա Եղի Խարաթյան Կ. Անիթ
(անվավականատիրոջ (օգտագործողի) անունը (անվանումը))

Արմավիրի մարզի Գ. Մարտիրոսյան
(անշարժ գույքի գտնվելու վայրը (հասցեն), անվանումը)

Գ. Մարտիրոսյանի քաղ. քիմ. Ե Խարաթյան ԿԱՍՏԱՍԲ

Մարտիրոսյան Գրադիսյան Գարեգին 15.06.1993թ. ՃՄ արևմտաքաղաք
(անշարժ գույքի ծեօքբերման իրավունքը հաստատող փաստաթղթի անվանումը)


Մարտիրոսյան Խարաթյանի անվ. հանկանձար 12.03.1999թ. ՎՅԿ.Կ.ԴՆ. ԴԻՄԱՆ ԿՐԱ

ԳՐԱՆՑԿԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԵՆԹԵՐ
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ, ԳՈՒՅՔԻ ԿԱՍՏԱՍԲ
ԻՐԱՎՈՒՆԵՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԻԱՄՆԱԿԱՆ
ՕԿ-093-4-5 ՍԱՑՄԱՆ 000258 ՀԱՍԱՐԻ ՏԱԿ:

ՍՈՒՅՆ ԿԱՅԱԿԱՆ ԿԱԶՄԿԱԾ Է ԵՐԿՈՒ ՕՐԻՆԱԿԻՑ, ՄԵԿԸ ՏՐԿՈՒՄ Է ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋԸ
(ՕԳՏԱԳՈՐԾՈՂԻՆ), ՄՅՈՒՄԸ ՊԱՅՎՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԵՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՈՒՄ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՌԵՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՈՒՄ

ՂԵԿԱՎԱՐ Ք.Ն. ԸՕՕՏ Գ. Մարտիրոսյան
(ստորագրությունը)




29 » ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ 2011 թ.

2883091


ՅՈՂԱՍՍԱՄԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ

(մասշտաբը) 1:500



ՀԱՏԱԿՈՐ	ԵՐԿԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՓԸ	ԱԱՀՄԱՆԱԿՄԱՆ ԱՅԿԱԿԱՆՏՈՒՄ և նրան աջակցողներ	Զինորձան ՀԱՍԱՐԸ	Զինորձան ԱՆՎԱՅՈՒՄԸ
1-2	15.2	ՀԱՄԱՅՆՔ - ԱՅԿԱԿԱՆՏՈՒՄ	1	ՉԵՆՔ
2-3	40.7	ՓՈՂՈՑ		
3-4	15.2	ՀԱՄԱՅՆՔ. ԱՅԿԱԿԱՆՏՈՒՄ		
4-1	40.7	ՀԱՄԱՅՆՔ. ԱՅԿԱԿԱՆՏՈՒՄ		


Կատարող *Մանուկ Արսենյան*
(ստորագրություն)




ՇԵՆՔԻ ԳՆԱՏԱԿԱԳԻԾԸ


(մասշտաբով) 1:500

$\sum z_{արվ}$
 $K=3.9$
 $h=3.6$
 $\phi=0.2 \div 0.5$
 $d=0, t=0.5$



Կատարող  Օ. ԳՈՏՆԻԶԱԾԵ
 (պլանիչադրույիչ)





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌՇՆԹԵՐ
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱՂԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՏԵՂԵԿԱՆՔ

ԳՈՒՅՔԻ ԱՌԱՆՁԻՆ ՈՐԱԿԱԿԱՆ ԶԱՆԱԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԻ ԵՎ ՂՐԱ ՆԿԱՏԱՄԱԲ
ԱՌԱՆՁԻՆ ԻՐԱԿՈՒՆՔՆԵՐԻ (ՍԱՀՄԱՆԱՓՈՎԿՈՒՄՆԵՐԻ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

13/04/2012թ. N ԱՏ-11/04/2012-1-0167

Ղիմող՝

ՀՀ Փաստաբանների պալատ փաստաբան Գ. Գրիգորյան

N 11/04/2012-1-0167 ղիմումի հիման վրա

Առ այն, որ որ Արմավիրի մարզի Տարոնիկ համայնքի Չորավար Անդրանիկ փողոցի թիվ 6
հասցեում գտնվող անշարժ գույքը ստացել է պետական գրանցում սեփականության
իրավունքով Սահակ Երվանդի Հարությունյանի անվամբ: Կից տրամադրում ենք գրանցման հիմք
հանդիսացող փաստաթղթերի պատճենները:

Տեղեկանքը կազմվել է ՀՀ ԿԱ Անշարժ գույքի պետական կոմիտեի
աշխատակազմի **Արմավիր SU արխիվի առաջատար մասնագետ**
Սեդրակ Բաբայանի կողմից

*Սույն տեղեկանքը հաստատված է էլեկտրոնային եղանակով տեղեկանքը կազմող պաշտոնատար անձի
կողմից:

Տեղեկանքը հանձնող ՀՀ ԿԱ Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի
սպասարկման գրասենյակ Կ.Տ

147124

Հայաստանի Հանրապետության
կառավարությանն առընթեր անշարժ
գույքի կադաստրի պետական
կոմիտեի աշխատակազմի
սպասարկման գրասենյակ

Դիմող Խաչատրյան Կարեն Կարենի - իր

Դիմողի Կրկնային տարրի համարի վրայ #37

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ բայ Ժառանգության գերեզմանի վրայ համար #

Քաղաք Արշակունյի քաղաք #6 Կառավարական գրանցում

անշարժ գույքի վրայ # 213/309

Կից ներկայացնում եմ

Մեզման անշարժ գույքի փոխանցման պայմանագրեր

Խնդրում եմ գրանցումը կատարել սույն դիմումը ներկայացնելու օրվանից

379 աշխատանքային օրը:

Անձնագրի տվյալները ՀՕ 0211471 057 13 01 09

Սոցիալական քարտի համարը (առկայության դեպքում)

Դիմող Կարեն Խաչատրյան (Կարեն Խաչատրյան)

Դիմումի ներկայացման ամսաթիվը " " 2012 թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՈՒՅՈՒՆՎԱԾՆԵՐԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԻ ԲՆԱԿ
ՀԱՅ 44078610981440740

ՄԱՐԿԱՆԱԿԱՆ ՏՆՎԵՐԱԿ
(բազանաբանային գրանցում)

ՄԱՐԿԱՆԱԿԱՆ ՏՆՎԵՐԱԿ
6.20.2012.11.11.23 AM 800010
Ա.Ա. ՕՏԷՆԻՍԻՆԻՍԻԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ
Հանգի 9 ՏՆՎԵՐԱԿ
ՀՀ 920013220018
Մասնաճյուղ 229ՄԱՐԿԱՆ
Շրջանային ԲՆԱԿ
Միջանկյալ հարկային 300.0 ԱՄՆ

Մասնաճյուղի Բաժնետերեր

Մասնաճյուղի Բաժնետերեր

Մասնաճյուղի Բաժնետերեր

Մասնաճյուղի Բաժնետերեր

ՄԻԱՆՐԱԿԱԼ ՏԵՂԵԿԱԼՔ
N US-22062012-04-0015

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի
Արմավիր տարածքային ստորաբաժանում

Անշարժ գույքի գտնվելու վայրը՝ **Մարզ Արմավիր, համայնք Տարոնիկ 2, Անդրանիկի փողոց թիվ 6**
 Հողամասի ծածկագիրը՝ **04-093-0030-0009** Հիտության ծածկագիրը՝ **04-093-0030-0009-001**

1. գրանցված իրավունքներ		Հողամասի նկատմամբ		Ծեփ, շինությունների նկատմամբ		
Հ/Ի	Իրավունքի տիպիցությունը, ազգանունը, անունը, անվանումը, բաժնեմասը	Նպատակային նշանակության ռեզիմ	Իրավունքի տեսակը	Մակերեսը (հա)	Նախատեսված իրավունքի տեսակը	Ընդհանուր մակերես (հա)
1	Սահայ Հարությունյան Երվանդի	ռեզիմ	սեփականության ռեզիմ	0,0619	ռեզիմ	360,9

2. գույքային իրավունքների սահմանափակումներ

Գրանցված սահմանափակումներ չկան

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ 423.3քմ արտաքին մակերեսն է: Հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը 360 9քմ կազմում է 2ժեքի ներքին մակերեսը, 199-Ն օրենքի 23-րդ կետի պահանջներին համաձայն, պայմանով գույքի հետագա օտարման գործարարության ժամկետը կառավարության կողմից կվստորադրվի իրավունքների պետական գրանցումը կկատարվի վճարման պահին գործող հողամասի կադաստրային արժեքի վճարման անդրադարձից ներկայացնելու դեպքում:

Տեղեկանքում տվյալները լրացված են «22» Հունիս 2012 թ. 16:33 դրությամբ

Տրամադրության F Հասմիկ Կարապետյան Ռաֆիկի
 Տեղեկանքը հանձնվել է սպասարկման գրասենյակի Կ.Տ.

Տեղեկանքը պատրաստող պաշտոնատար անձ
 Արմավիր ՏՄ արխիվի առաջին կարգի մասնագետ
 Վարդիկ Սողոմոնյան

110771

Հայաստանի Հանրապետության
կառավարությանն առընթեր անշարժ
գույքի կադաստրի պետական
կոմիտեի աշխատակազմի
սպասարկման գրասենյակ

Վրացաբնակարան
Դիմող Արթուր Արսեն Բազաբյան - իր
Դիմողի Արմենիկ Եսայ Գ. Տարբեր Բ. Առաջադիր Բ

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ կադաստրի իրավունքի գերատեսչությունում գրանցված
Արմենիկ Եսայի Գ. Տարբեր Բ. Առաջադիր Բ
անշարժ գույքի վրա իրավունքի գերատեսչությունում
կից ներկայացնում եմ

1. Առանձնաբաժնի պայմանագրեր
2. Դեպ գույքի և իրավունքի անցումագրեր
3. Անշարժ գույքի պայմանագրեր
4. Իրավունքի անցումագրեր

Խնդրում եմ գրանցումը կատարել սույն դիմումը ներկայացնելու օրվանից
9.09.2017 աշխատանքային օրը

Կատարման օժանդակը թվերով և բառերով
ԱՆՆՆԱԳՐԻ ՍՎԼԱՄԵՆԵՐԸ ԱՂՆԱԿԱՆ ԵՍՏՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ - 057 4077

Սոցիալական քարտի համարը (առկայության դեպքում)

Դիմող՝

Արթուր Արսեն Բազաբյան
Ստորագրություն

(Ա. Բազաբյան)
Կնիմունքագրող

Դիմումի ներկայացման ամսաթիվը

«20» 09 -ի 2017 թ

- 500/300 20 000000 000
210000 000000 000000
21000000 0000 000000

* 500/300 20 000000 000000
* 500/300 20 000000 000000

00000000 0000 00000000
7 20 2012 4 25 53 PM 500010
U.U. 082 000000 0000000000
20000 9 000000
22 900013220018

000000 2200000000
00000000 25000 AMD
00000000000000 30000 AMD

00000000 0000000000

000000 000000

00000000 000000
000000000000000000

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԱՌՈՒՎԱԾԱՌՔԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետություն, քաղաք Էջմիածին

Երկու հազար տասներկու թվականի հուլիսի տասնիննին

Մենք՝ Սահակ Երվանդի Հարությունյան, բնակվող ՈՂ Սանկտ-Պետերբուրգ քաղաքի Ջաննակի պրոսպեկտ 10Ա հասցեում, որի անունից լիազորագրով տրված 14.06.2012թ., ռեեստր 14Գ-5318 Սանկտ-Պետերբուրգ քաղաքի նոտարի կողմից հանդես է գալիս Հասմիկ Ռաֆիկի Կարապետյանը, բնակվող Էջմիածնի շրջանի Տարոնիկ գյուղում, անձնագիր AG 0216471 տրված 13.01.2004թ., 057 կողմից, այսուհետև «Վաճառող» մի կողմից և Հարություն Պարզևի Եղիազարյանս, անձնագիր AH 0265712 տրված 13.10.2006թ., 057 կողմից, Ալբերտ Աղասու հաչատրյանս, անձնագիր AG 0612481 տրված 17.11.2005թ., 057 կողմից, բնակվող Արմավիրի մարզի Տարոնիկ գյուղում, այսուհետև «Գնորդ», մյուս կողմից, կնքեցինք սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՑ

- 1.1 Վաճառողը վաճառում է իսկ գնորդը որպես սեփականություն, ձեռք է բերում Արմավիրի մարզի Տարոնիկ համայնքի Ջ.Անդրանիկի փողոցի թիվ 6 հասցեում գտնվող հասարակական նշանակության շինությունը:
Ամբողջ շինությունը 360,9քմ է, հողամաս 0,0619հա. է:3609,9քմ կազմում է շենքի ներքին մակերեսը, 423,3քմ. արտաքին մակերեսն է, հետագայում անշարժ գույք
Անշարժ գույքի վաճառքի գինը կազմում է 2 090 000 /երկու միլիոն/ ՀՀ դրամ:
- 1.2 Անշարժ գույքը սեփականության իրավունքով պատկանում է «Վաճառողին» նո. 2883091 սեփականության վկայականի հիման վրա տրված
29.12.2011թ. անշարժ գույքի կադաստր «Վաղարշապատ» ՍՍ-ի կողմից:
- 1.3 Անշարժ գույքի վաճառքի գինը որոշված է կողմերի համաձայնությամբ:
- 1.4 Սույն պայմանագիրը կնքելու պահին անշարժ գույքը վաճառված, նվիրված կամ գրավ դրված չէ, արգելանքի տակ չի գտնվում համաձայն անշարժ գույքի կադաստր "Արմավիր" ՍՍ-ի կողմից 22.06.2012թ տրված թիվ US-22062012-04-0015 միասնական տեղեկանքի:
- 1.5 Սույն պայմանագրի հաստատման հետ կապված ծախսերը կատարում է Գնորդը:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 2.1 Վաճառողն իրավունք ունի, եթե
2.1.1 Գնորդը ժամանակին չի վճարել սույն պայմանագրին համապատասխան հանձնված անշարժ գույքի համար պահանջել վճարել օրյեկտի համար նաև տոկոսներ՝ ՀՀ Բաղ. օր-ի 411 հոդվածին համապատասխան:
- 2.2 Վաճառողը պարտավոր է՝
2.2.1 Պայմանագիրը կնքելուց հետո՝ տաս օրացույցային օրվա ընթացքում հանձնան-ընդունման ակտով գնորդին փոխանցել անշարժ գույքը:
2.2.2 Անշարժ գույքը հանձնելու հետ միաժամանակ գնորդին հանձնել դրա պատկանելիքները, ինչպես նաև դրան վերաբերվող փաստաթղթերը:
2.2.3 Գնորդին հանձնել 3-րդ անձանց իրավունքներից ազատ անշարժ գույք
2.2.4 Գնորդն իրավունք ունի
2.3.1 Իրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց, եթե վաճառողը հրաժարվում է սահմանված ժամկետում հանձնել վաճառված անշարժ գույքը նրա պատկանելիքները և փաստաթղթերը:
2.4 Գնորդը պարտավոր է
2.4.1 Անշարժ գույքի նկատմամբ իրավունքը գրանցել լիազորված գույքի գտնվելու վայրի անշարժ գույքի պատկան կադաստրի տարածքային ստորա-ածախսում 30 ախտաճանաչան օրվա ընթացքում:
2.4.2 Անշարժ գույքի արժեքի հետոյե գովելից վճարվել է պայմանագիրը կնքելու պահին
2.4.3 Վաճառողից անշարժ գույքը բնութեկ հանձնան ընդունման ակտով

3. ԱՇՏՈՎԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆԵՒ ՓՈՒՍԱՆՑՈՒՄԸ

3.1 Անշարժ գույքի նկատմամբ գնորդի սեփականության իրավունքը ծագում է պետական կադաստրում այդ իրավունքի գրանցման պահից
3.2 Հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցված է ՀՀ 04.10.2005թ. 199-Ն օրենքի 23 հոդվածի պահանջների համաձայն գույքի հետագու օտարման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումը կկատարվի վճարման պահին գործող հողամասի կադաստրային արժեքի վճարման անդորագիրը ներկայացնելու դեպքում:

4. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 4.1 Համաձայն ՀՀ «Գույքահարկի մասին» օրենքի 8 կետի գնորդին է անցնում չմուծված գույքահարկի հետ կապված պարտականությունները:
- 4.2 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտականությունները չկատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ Օրենսդրության սահմանված կարգով:
- 4.3 Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, 4 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, որոնցից մեկ օրինակը պահվում է նոտարական գրասենյակում, մեկը տրվում է վաճառողին, երկուսը՝ գնորդին:
- 4.4 Գայմանագիրը կողմերի համար բարձրաձայն ընթերցվեց նոտարի կողմից և պարզաբանվեց օրենսդրությամբ գործող նորմերը:

ՎԱՃԱՌՈՂ

ԳՆՈՐԴ

Վաչագանյան Կարեն Էդուարդի
Հարությունյան Զատիկ

Գևորգ Կարամյան
Գևորգյան Արմեն

Երկու հազար տասներկու թվականի հուլիսի տասնիննին, սույն պայմանագիրը վավերացված է իմ Վաղարշապատ նոտարական տարածքի նոտար՝ Վրեժ Ղարիբյանի կողմից:
 Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Կողմերի ինքնությունը, նրանց գործունակությունը, ինչպես նաև անշարժ գույքի նկատմամբ քաղ. Սահակ Հարությունյանի իրավունքները ստուգված են:
 ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 563 հոդվածի համաձայն, սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի պետական կադաստրի համապատասխան մտարարաժանունում երեսուն աշխատանքային օրվա ընթացքում:



Գրանցված է սեղանամատյանում.....ով
 գտնված է պետական սուրբ է. ծառայության վճար
 համաձայն ՀՀ «Պետական սուրբի մասին» և
 «Նոտարիատի մասին» օրենքների

ՆՈՒՍԱՐ

GENERAL OBSERVATIONS

Captain by Lochner 10/27/09
118 11/20/09
02/08 100/100 11/20/09

U.S. DEPARTMENT OF COMMERCE
 NATIONAL OCEANIC AND ATMOSPHERIC ADMINISTRATION
 OFFICE OF SEA AND COAST GUARDIAN

17-11-2010
 04-10-2013




NOOS 12401

GENERAL OBSERVATIONS

Captain by Lochner
118 11/20/09
02/08 100/100

U.S. DEPARTMENT OF COMMERCE
 NATIONAL OCEANIC AND ATMOSPHERIC ADMINISTRATION
 OFFICE OF SEA AND COAST GUARDIAN

NOOS 65712



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԿԱՅԱԿԱՆ
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՍԱՍԲ ԻՐԱՎՈՒԼՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Սույն վկայականով հաստատվում է «24» Հուլիսի 2012 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒԼՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ (ՆԵՐ)

Այբերտ Խաչատրյան Ադատու, Հարություն Եղիազարյան Պարզեվի

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Արմավիր, համայնք Տարոնիկ 2.Անդրանիկի փողոց թիվ 6

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՍԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՅԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Առուվաճառքի պայմանագիր 19.07.2012թ ս/Վ 4030:

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 04-093-0030-0009

Մակերեսի չափը (հա)՝ 0.0619

Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հասարակական կառուցապատման

Գրանցված իրավունքի տեսակը՝ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍՍԵՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Նպատակային նշանակությունը՝ Հասարակական

Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/հ	Կադաստրային նաժկագիրը	Տեսակը	Մակերեսի չափը	Գրանցված իրավունքի տեսակը
1	04-093-0030-0009-001	Մանկապարտեզ	360.9 ք.մ.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Կարդան Ծաղոյան Արմավիր SU

գրադեցրած պաշտոնը՝ Արմավիր SU անշարժ գույքի ավագ ռեգիստր

ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի՝ վկայականը տրամադրող սպասարկման գրասենյակի Կ.Տ.

Հայաստանի Հանրապետության
կառավարության առընթեր անշարժ
գույքի կադաստրի պետական
կոմիտեի աշխատակազմի
սպասարկման գրասենյակ

Վարչապետ

Դիմող *Արթուր Արսևս Խաչատրյան - հգ*

Դիմողի *Արթուր Արսևս Խաչատրյան*
Կոմ. Տարածքի և Անդրաբերքի ԿԾ
Երևանի մարզ
3333 4661

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ *կադաստրի ուղղի բաժնում անդրաբերքի*

Արթուր Արսևս Խաչատրյան և Անդրաբերքի ԿԾ
հասցեյալ զանազ շինի նկարագր

Կից ներկայացնում եմ

(Անդրաբերքի ուղի (Ֆուսսիս)) բաժնում անդրաբերքի
ուղի քարտի և շինի նկարագր
անշարժ գույքի
բաժնում նկարագր

Խնդրում եմ գրանցումը կադաստրի սույն դիմումը ներկայացնելու օրվանից

աշխատանքային օրը
կատարելու մասին *ԱՅՈՒՆ ԿՐԻՍՏՈՒՄ ԿՐԻՍՏՈՒՄ*

Սոցիալական բարոյի համարը (առկայության դեպքում)

Դիմող *Արթուր Արսևս Խաչատրյան*
Կոմ. Տարածքի և Անդրաբերքի ԿԾ

Դիմումի ներկայացման ամսաթիվը *23.05* թ 201 թ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱԿԻՐԻ ՄԱՐԶԻ

ՏԱՐՈՆԻԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Թիվ 20

«07» 09 2012թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱԿԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՐՈՆԻԿԻ ԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԵՏԻ «07» 09 2012թ. N 20 ՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՍՑԵ-ՀԱՍԱՐԱՆԻՇ ՏՐԱՍԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լ ս ե ց ի - Տարոնիկ համայնքի բնակիչ՝ Հարություն Եղիազարյանին պատկանող շինությանը հասցե-համարանիշ տրամադրելու մասին:

Ո Ր Ո Շ Ե ց ի - Հարգել Տարոնիկ համայնքի բնակիչ՝ Հարություն Եղիազարյանի դիմումը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 29.12.2006թ. N 2387-Ն որոշումը Տարոնիկ համայնքի բնակիչ Հարություն Եղիազարյանին պատկանող շինությանը տալ Զ. Անդրանիկի 6 հասցե:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՏԱՐՈՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Դ Ա ՌԱԶՄՏՐՅԱՆ /

«07» 09 2012թ.

գ. Տարոնիկ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱԿԻՐԻ ՄԱՐԶԻ

ՏԱՐՈՆԻԿԻ ԳՅՈՒՂԱԴԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Թիվ 19

«07» 09 2012թ.


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱԿԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՐՈՆԻԿ ԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԴԵՏԻ «07» 09 2012 թ. N 19 ՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՍՑԵ-ՀԱՄԱՐԱՆԻԸ ՏՐԱՄԱՂՐԵՆՈՒ ՄԱՍԻՆ

Լ ս ե ց ի – Տարոնիկ համայնքի բնակիչ՝ Ալբերտ Աղասու Խաչատրյանին պատկանող շինությանը հասցե-համարանիշ տրամադրելու մասին:

Ո Ր Ո Շ Ե ց ի – Հարգել Տարոնիկ համայնքի բնակիչ՝ Ալբերտ Աղասու Խաչատրյանի դիմումը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 29.12.2006թ. N 2387- Ն որոշումը Տարոնիկ համայնքի բնակիչ Ալբերտ Խաչատրյանին պատկանող շինությանը տալ Զ. Անդրանիկի 6/1 հասցե:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՏԱՐՈՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ


Գ. ՏԱՐՈՆԻԿ

«07» 09 2012թ.

Գ. Տարոնիկ

**ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ԳՈՒՅՔԸ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ստանի Զանրապետություն բաղադր էջմիածին
և հազար տասներկու բվականի սեպտեմբերի յոթին

ք' Զարություն Պարզևի եղիակարյանս, անձնագիր AH 0265712, տրված 13.10.2006թ. 057-ի կնից բնակվող էջմիածնի շրջանի Տարոնիկ գյուղում, այսուհետև "Կողմ-1"
Ալբերտ Աղասու խաչատրյան, անձնագիր AG 0612481, տրված 17.11.2005թ. 057-ի կողմից անվող էջմիածնի շրջանի Տարոնիկ գյուղում, այսուհետև "Կողմ-2" ներ ժողովարձ սնամայնությամբ

Կնքեցինք սույն պայմանագիրը հետևյալի մասին

- Քաճանել ներքոհիշյալ բաժիններով՝ Արմավիրի մարզի Տարոնիկ համայնքի Զ Անդրանիկ փողոցի թիվ 6 մանկապարտեզը
1. "Կողմ-1" -ին անցնում է 172.4քմ մակերեսով շինությունը և 0.0290հա մակերեսով հողամասը ըստ ներկայացված և պայմանագրին կցված հատակագծի, որը համարվում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:
 2. "Կողմ-2" -ին՝ 188.5քմ ընդհանուր մակերեսով շինությունը և 0.0329հա մակերեսով հողամասը ըստ ներկայացված և պայմանագրին կցված հատակագծի, որը համարվում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:
- Արմավիրի մարզի Տարոնիկ համայնքի Զ Անդրանիկ փողոցի թիվ 6 մանկապարտեզը պատկանում է կողմերին թիվ 24072012-04-0155 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի հիման վրա տրված 24 հուլիսի 2012թ. անշարժ գույքի կադաստր "Արմավիր" ՏՄ-ի կողմից:
- Ամբողջ մանկապարտեզը կազմում է 360.9քմ, բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողամաս՝ 0.0619հա.
3. Սույն պայմանագիրը կնքելու պահին անշարժ գույքը վաճառված, նվիրված կամ գրավադրված չէ արգելանքի տակ չի գտնվում համաձայն անշարժ գույքի կադաստր Արմավիր ՏՄ-ի կողմից 04 սեպտեմբերի 2012թ տրված թիվ US-04092012-04-0010 ժխանակման տեղեկանքի
 4. Սույն պայմանագրի կնքման հետևազված ըստաները նստադրվում է Զարություն Պարզևի եղիակարյանը
 5. Սույն պայմանագիրը սերակա է գրանցման գումարի վայր անշարժ գույքի կադաստրի տարածքային ստորաբաժանում 30 արտադրանքային օրվա ընթացքում
 6. Սույն պայմանագիրը կազմված է չորս օրինակից որոնցից մեկը պատվում է վաղարշապատ տարածքի նոտարական գրասենյակում, իսկ մյուսները տրվում են կողմերին.

1. *[Signature]*
Յարգապատիվ Զարություն Պարզևի

Ստորագրություններ՝

[Signature]
Զարություն Պարզևի
Ալբերտ Աղասու
Կնքում է

Երկու հազար տասներկու բվականի սեպտեմբերի յոթին
Սույն պայմանագիրը վավերացված է ին վաղարշապատ նոտարական տարածքի նոտար Ալեք Ավետյանի կողմից
Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ կողմերի իմ ներկայությամբ կողմերը
գործունեությունը, ինչպես նաև անշարժ գույքի նկատմամբ թաղ Զարություն Պարզևի եղիակարյանի և Ալբերտ Աղասու խաչատրյանի իրավունքները ստուգված են
Գրքագրական օրենսգրքի 301 հոդվածին համապատասխան, սույն պայմանագիրը գրանցման է ենթակա ըստ գույքի գանձվելու վայրի կադաստրի տարածքային կադաստրում, որի օրվա ստորաբաժանում 30 արտադրանքային օրվա ընթացքում
Կազմված է սեպտեմբերի 2012 թ. 04-0010 ժխանակման տեղեկանքի հիման վրա
Սույն պայմանագիրը կնքվել է 2012 թ. 09-09-09
Ստորագրողների ներկայությամբ
Ստորագրողների ներկայությամբ

